Վահան Տերյան

Մռայլ գիշերն է լռում

Մռայլ գիշերն է լռում,
Խավար գիշերն ամենուր,
Ես վառել եմ խավարում
Իմ ճրագը ոսկեհուր…

Ստվերները ծածանուտ
Կերերան ու կըհանգչեն,
Կըզգամ քայլը քո ծանոթ,
Քո խոսքերը կըհնչեն:

Դու անկարծ կըհայտնվես,
Անակնկալ դու կըգաս,
Քաղցր սուտով կըխաբես,
Կըսիրես ու կըգթաս:

Եվ մենության այս միգում,
Ու խավարում այս մեռած
Սեր կըվառես իմ հոգում,
Ազատությո՛ւն ու երա՛գ…

Մեղմաքայլ կըհեռանաս,
Ես կըմնամ միայնակ,
Նորի՛ց, նորի՛ց կըդառնաս՝

Խորհրդավոր ու հստակ:

Մութ գիշերում կընստեմ՝
Լցված սիրով խնդագին,
Քո գաղտնիքը ես գիտեմ,
Բայց չեմ ասի ոչ ոքին….

Մռայլ գիշերն է լռում,
Խավար գիշերն ամենուր,
Ես վառել եմ խավարում
Իմ ճրագը ոսկեհուր…